

Խմբագրութեանս ուղղութեամբ նամակ
կամ այլ գրութիւնք ետ չեն ըրկաւոր,
Թողունանքն պատշաճ դատուած—
ները միայն պիտի հրատարակուին:

ՄԻՌԹԻՆ

Ամէն տեղերու համար գինն է
Տարեկան արծաթ փրանք 5
Վեցամսեան » » 3
Եռամսեան » » 2
էկ թիւը կ'արժէ սանթիմ 50
Բաժնեդիւնները կանխիկ վճարելի են:
Փոսթի ծախքը խմբագրութեան կը
պատկանի:

ՕՌԿԱՆ ՄԻՌԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ա Ս Ս Ա Թ Ե Ր Թ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Բ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Բ. ՏԱՐԻ

ԱԹԵՆՔ 1897 ՆՈՅԵՄԲԵՐ

Թիի 16

Հանրածանօթ յեղափ. գործիչ
Պ. Թափառիկ ուղղորութեան ար-
ժանի հետեւեալ յօդուածը զըր-
կած է մեզ, որոյ յանունն հա-
կոնականութեան սիրով կը հրա-
տարակենք խմբագրական բաժնին
մէջ, մեզ վերապահելով «Միու-
թեան» և Համերաշխութեան տար-
բերութիւնը բացատրող պատասխա-
նը մեր յաջորդ թուով:

ՄԻՌԹԻՆ Ե Ի ՀԱՍԵՐԱԾԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ

Ա. Գ. Ա. Դ. Ի. Ն. Զ. Ա. Ն. Բ. Բ. Ը.

ԱՐՏՈՍԱՂԱՄԱՆ, 10)22 սեպտ.

Ես իսկապէս միութեան ջերմ
վախճանողներէն եմ, սակայն լաւ
կը տեսնեմ նաեւ միութեան զըր-
ւարութիւնները, և իմ մէջս այն
աստիճանի հաստատ համոզում գո-
յացած է, որ անկարելի իսկ
կը նկատուի եթէ երբեք միութե-
ան իսկ յառաջ գայ, ակնու-
կալուած ճշմարտ արդիւնքը չը
պիտի վայելէ ազգը, որովհետեւ ես
քաջ գիտեմ որ միութեան մէջ
ձայներու առաւելութիւնը որ կ'ըզմ
պիտի մնայ, և հետեւեալ արդիւն-
քը այն պիտի ըլլայ, ինչ որ է
անցեալին և ներկային մէջ, միե-
նոյն անտեղի շարժումները պիտի
շարունակուին միութեան ա-
նունին տակ:

Բացարձակ միութիւնը չէ որ
ազգին ճակատագիրը պիտի փրկէ,
ըստ իս, միութիւնը գործնական-
որէն մէջ մեծ նշանակութիւն մը
չունի, և մինչեւ ցարդ եղած չա-
րքը ոչ թէ բացարձակապէս ան-
միութեան օրինակ է, յառաջ ե-
կած է, այլ «գործի» և նպատակի
ծրագրով շարունակուի. . . . Պահ
մը կ'ընդարձակէ թէ մինչեւ ցարդ
միութեամբ յեղափոխական ցոյցե-
րը, շարժումները և ձեռնարկու-
թիւնները մեր երեւակայած կու-
սակցական միութեան ց
տակ գործուած ըլլային, խնդրեմ,
ըսէ՛ք, հետեւեալք միթէ՞ միեւնոյնը
չպիտի ըլլար, միեւնոյն բանտար-
կութեանց, աւերմանց, կոտորածի
և այլ խժժութեանց տխուր տե-
սանքները չպիտի ըլլային. . . .
Տարբերութիւնը միայն այն պիտի
ըլլար, որ ցոյցի և այլ շարժում-
ներու մասնակցողներու թիւը կըրկ-
նապատկուած պիտի տեսնէինք, ու-
րիշ ոչինչ, չկայ դրական ուրիշ
փաստ մը որով որիւք եղբակցու-
թիւն մը կ'արեւանք հանել:

Ուրեմն, «կուսակցական ան-
միութեան» չէ որ իսկապէս
մնասցնի Ս. Գործին, այլ գործի ու
նպատակի ծրագիր շարունակելու էր
որ զմեզ մըն անփութութենէ փոր-
ձանքի յուսալիցութենէ դէպի ան-
նպատակ, կործանարար և յայտու-
նալից շարժումներու և հետեւեալք այն

եղաւ, ինչ որ արդէն անխուս-
փելի էր, ինչ որ արդէն շատ փոր-
ձառու և հեռատես յեղափոխա-
կաններ զգացեր ու գուշակել էին:
Իրաւ է՝ թէ միութիւնը «ոյժ»
է, սակայն աննպատակ և անծը-
րագիր միութեան համար չէ: Գու-
ցէ շատերուն զարմանք պատճառէ
եթէ յայտնեմ թէ՛ մեր յեղափո-
խական կուսակցութիւններէն և ոչ
մին ունեցած է իր նպատակի ծը-
րագիրը, չենք ուրանար որ ունե-
ցած են իրենց կազմակերպութեան
ծրագիրները, կամ լաւ ևս կանո-
նադրները, այլ սակայն երբեք
ունեցած չեն բուն գործի ու
նպատակի ծրագիրը: Եւ զայն ալ
ծրագիր ըսելով, կ'ուզեմ հաս-
կացնել յեղափոխական շարժմանց
մէջ չափաւոր, և զայն ալ կը և
պայմանները:

1.—Հայութեան փրկութիւնը ո-
րով երկու միջավայրի մէջ կարելի
էր, կամ բուն Հայաստանի և կամ
. . . . մէջ. երկուքը մէկէն Հայ
յեղափոխական գործողութեանց թա-
տըր ընտրելը, ըստ իս անխուս-
փելի էր, նախ երկուքին մէկը
պէտք է ընտրէինք: Ըստ իս, եթէ
այն տեղը կէտ նպատակի ունե-
նայինք, յաջողութիւնը ապահով էր,
որովհետեւ այս ծրագրին Ռուսիա
չէր հակառակի, անկեղծօրէն կ'ա-
ջակցէր մեր դատին և զայն պաշտ-
պանելով գլուխ ալ կը հանէր. պա-
րագանքներու ու դէպքերը արդէն ա-
պացոյց են թէ Ռուսիոյ քաղաքա-
կանութիւնը յաղթող հանգրիւացաւ
և այդ յաղթութենէն Հայերն ևս
իրենց բաժինը կ'ունենային: Հայը
չէ կարող Ռուսիոյ դէմ մըջիլ և
անոր դարաւոր ծրագիրները հիմ-
նովին տապալել, նոյն իսկ Անգլիա
ալ չէ կարող, ինչպէս փորձելը
ցոյց տուին. Անգլիա շատ շատ կը
յետաձգէ Ռուսիոյ ծրագիրներուն
գործադրութիւնը, և այնչափ ա-
տեն կը դիմադրէ անոնց, մինչև որ
իր բազմացած ժամանակը կը հաս-
նի և ինքն ալ կարող կ'ըլլայ միւս
կողմէ իր ծրագիրներու գործադրու-
թեան. սակայն ասիկա չնշանակիր
թէ բոլորովին արգելք կը հանդիսա-
նայ Ռուսիոյ ծրագիրներուն, ո՛չ,
նա գիտէ թէ Ռուսիա օր մը պի-
տի տիրանայ Հայաստանի, այլ կը
սպասէ որ յարմար ժամանակին
տիրանայ որպէս զի ինքն ալ մեծ
պատահանքով տիրանայ:

Ծնարկութիւնը որ Անգլիա սըը-
տովին կը ջանայ Հայաստանը ան-
կախ վարչութիւն մը տեսնել և
անով պատուար մը կազմել Ռու-
սիոյ յառաջխաղացման, սակայն
տարբեր է կամենալը և տարբեր է
գործադրելը. հակառակ պարագա-
յին Անգլիա չուտով կը հրաժարի
իր այս դիտաւորութենէն. եթէ ա-
նոր փոխարինող ուրիշ առաւելու-
թիւն մը ձեռք ձգելու պարագան
ներկայանայ, և աւելի Անգլիա կը
սպասէ այս պարագան տեսնել
քան թէ իսկապէս Հայաստանի ան-
կախութիւնը: Ասոնք դիւանագի-
տական խաղեր են, որոնց զոհ
գացին Հայերն ու յոյները. . . .
Դեռ շատին ալ այդ հոսանքն
քուլուելով կորուստի կը մատուցին,
եթէ ժամանակի ոգի չեն լաւ
չճանչնան և իրենց քայլերը անոր
չյարմարեցնեն:

Հայաստանի մէջ գործելու ծը-
րագիրը անյաշող է, քանի որ Ռու-
սիոյ նման հզօր պետութեան մը
դիմադրութեան պիտի հանդիպինք,
և ինչ կը կարծէք, նայն իսկ այդ
դիմադրութիւնն էր որ Սուլթանին
հայերը բնաջինջ ընելու ծրագիրը
գործադրել տուաւ, հարկը հաղարա-
ւոր Հայերու կոտորածին ըսեն
պատճառը եղաւ: Անգլիա ինչ ը-
րաւ, կամ ինչ կարողացաւ ընել
Ռուսիոյ մտադրութեանց չափ ու
սահման մը դնելու համար: Ոչինչ,
միայն «բարենորոգման» ծրագիրներ
ներկայացնելու աշխատեցաւ, դիտ-
նալով որ անոնք մեռեալ տառեր
պիտի մնան և Պերլինի դաշնա-
դրին նման անգործադրելի պիտի
մնան: Նոյնպէս ժողովրդային մի-
թիւններ կ'աղմեց, ազգեցիկ և պաշ-
տօնական անձանց ընդունով սպառ-
նալիքներ կարողաց, յուսալից ու
չողողուն ճառեր արտասանեց, այս
ամենը Հայերուն ինչ օգուտ տուին,
կը հարցնեմ—Ոչինչ, զէջ ո՛ւ
կոտորած. . . . Հայերը
իսկապէս Անգլիոյ մէջ ճար կը
փնտռէին, ծափահարելի ճառեր
միայն դուստ:

Բայց յանցաբեր որուն է.
Անգլիա իր դիւանագիտական ծը-
րագիրները ունի և ազատ է իր
ուզած միջոցը ընտրել քայլ առ
քայլ անոնց մօտենալու և անոնք
գործադրելու համար, մեղաւորը հա-
յերն են որ յայս դրին և տակա-
ւին կը գնեն անոր դիւանագիտա-
կան խաղերուն վրայ, և երբ ի-
րենց խաղերուն յոյսերը չիրականա-
նան, այս ու այն տեղերէն ինքնե-
րը մեղադրեն, փոխանակ մեղադրե-
լու իրենց տգիտութիւնը և միա-
մտութիւնը:

Ուրեմն, Ռուսիա Հայաստանը
ձեռքէ չթողըր, Անգլիա չէ կարող
անոր ձեռքէն իւրը զայն և վերա-
կանդնել, ինչ կը մնայ ընել հա-
յուն. . . . անպատճառ զօր պէտք
է տայ որ ձեռք ձգէ զայն և իր
զօրը պարզէ մասնաց գաղաթը.
երա՛ւ, երա՛զ աւելի բանդադու-
շանք. . . .

Ռուսիոյ Հայաստանի նկատ-
մամբ ունեցած ծրագիրը բացար-
ձակապէս յայտնած է Լօպատօֆ,
(տես 1895ի Անգլիոյ «Կապոյտ տե-
տրակը»): —Ռուսիա բնաւ չփափա-
քիր երկրորդ Պուլկարիա մը տեսնել
իր քթին տակ, և թէ Հայաստա-
նի անկախութիւնը ուղղակի Ռու-
սիոյ շահերուն կը դպչին: —Այս-
պէս խօսած է Լօպատօֆ, այս կը
պահանջէ Ռուսիոյ դարաւոր քաղա-
քականութեան ծրագիրը, և այս
խօսքերը անշնչելի արձանագրու-
թիւններ կը կազմեն Հայկական
դատի պատմութեան և ինչ ըսեն
մէջ. եւս Հայը տակաւին Հայաս-
տան կ'երազէ. . . . մահ կամ
Հայաստան կը պոռայ. . . . թող
պոռայ ուղածին չափ, իր ձայնը
պիտի խղրուի, և մահը իրեն բա-
ժին պիտի մնայ, ինչպէս որ ար-
դէն սկսած է արժանանալ. . . .

Ծնարկութիւնը Հայաստան և հեռատես
անգլիացիք մեզ նոյն բանը կը քա-
րողեն. Տըթ. Տիւն առիթը ներ-
կայացած ատեն խորհուրդ տուած
է որ Անգլիա վրայ յոյս չդնենք.
Հայաստանն ձեռք քաշենք, միայն
նոյն երկրին մէջ գործենք: Նոյն

խօսքերը կրկնած է նաեւ «Տէլի-
նիզ»-ի Հայաստանի թղթակից վաղա-
մեռիկ Ջերմայն: Նոյն իսկ մեր
դատին ջերմ պաշտպան և թրքատե-
կաց Սըր Ֆիլիք Փըրրի, Պուլկարի
անգլիական դեսպանը այս տողերս
գրողին ըսած է.—«Անգլիա Հայե-
րուն համար բան մը չպիտի կըր-
նայ ընել, քանի որ Ռուսիոյ զօ-
րաւոր հակառակութիւնը կայ, հա-
յերը պէտք է հանդարտ կենան,
և այլն: Եւ իրօք ալ հանդարտ կե-
ցան Հայերը, անմիջապէս Պապը-
Ալիի ցոյցը կազմակերպելով հա-
րկը հաղարներ ջարդուեցան. . . .
Եւ Հայաստանի. . . .

Տոհմային այս քայքայման, աղ-
գային այս հոգեվարքին մէջ եթէ
հայը յուսոյ փոքր նշույլ մը ունի,
այն ալ. . . . է, Հայութեան
համար անկից դուրս չկայ փրկու-
թիւն. . . . Եթէ մեր ոյժերը հոն
չկեղորոշեցնենք և «եղանակի» ու
պայմաններէ համաձայն չհարժինք,
և եթէ առջի պէս Հայունակներ
մասնակի ցոյցներ, մեր բոլոր յի-
ղափոխական ոյժերը չառ չտե-
րորովին կ'ապառին և Հայն ալ
կը խալի: Հայութեան ձեռքէն,
ընդհանուր առմամբ հետ հողը կը
մտնայ Հայաստան ալ. . . .

Սրոք, մեր նպատակի ու գոր-
ծի ծրագրին մէջ նոյն տեղը պէտք
է ըլլայ միջավայրը, Հայաստանի
ոյժերը պէտք է կեղորոշեն այն
տեղ և սպասեն յարմար միջոցին
շարժելու:

2.—Հայութեան փրկութիւնը
կարելի է մի որով եղանակաւ: Պէտք
է խոստովանել որ յեղափոխական
կուսակցութիւններէն և ոչ մին ու-
նէր կամ ունեցաւ իր գործելու ե-
ղանակը: Ամենապարզ ցոյցներէն ըս-
կըսած, հետեւեցան հրոսակային,
Հայուկային գործերու, արշաւա-
կան յարձակումներու և ծայրայեղ
անիշխանական միջոցներու: Զմոռ-
նանք յիշել նաեւ ապստամբական
շարժումները, ինչպէս Սասուն և
Զեյթուն:

Այս զանազան ձեռնարկու-
թիւնները բացարձակապէս կ'ապա-
ցուցանեն մեր նպատակի ու գործի
ծրագիր շարունակելու Սյոքան զա-
նազան և իրարմէ տարբեր միջոց-
ներու միանգամայն մէկանց ձեռ-
նարկելը ի հարկէ տգիտութիւն է:
Պէտք է նախ ի նկատի ունենա-
լինք քաղաքական հանգամանքնե-
րը և կացութիւնը, երկրին պայ-
մանները և կազմակերպութեանց ոյ-
ժերը. և ըստ այնմ ընտրելիք
այդ միջոցներէն մին և ամենա-
յարմարագոյնը, նպատաւորը և ոչ
թէ անճարակ մարդու պէս միան-
գամայն ամենին ալ ձեռք առնէինք,
և ոչ մէկէն ալ օգուտէինք: Այդ
զանազան միջոցներն էին որ կա-
մաց կամաց և անդալաբար մեր
յեղափոխական ոյժերը սպառեցին,
կ'ապառնէ և պիտի սպառեն: Ա-
սիկա անուրանալի ճշմարտութիւն
մըն է, որուն վրայ Հայութիւնը կը
գրուին, եթէ բոլոր փաստերը,
պայքայցները և պատճառաբանու-
թիւնները մի առ մի թուել ըս-
տիպելին:

Ուրեմն, այժմ պէտք է խոր-
հինք այս զանազան միջոցներէն
մին մեզ գործելու եղանակ ընտ-
րել, որն որ մեր այժման գը-

րութեան, կացութեան, վիճակի
և ոյժերուն կը յարմարի. միայն
այն ընդունինք և միւս միջոցնե-
րէն իսպառ հրաժարինք, մեր բո-
լոր գործունէութիւնը անոր վրայ
կեղորոշեցնենք և սպասենք նպատ-
աւոր պայմաններին:

Ըստ իս, քանի որ հոն գոր-
ծելու միջավայր պիտի ընդունինք,
ամենայարմար և օգտակար եղա-
նակն «ընդհանուր ապստամբու-
թիւնն» է: Համաժամբուած թէ տե-
ղական և թէ օտարամետ ոյժեր
զէն ի ձեռին միանալու և միա-
ժամանակ կուլուելու և մի քանի
ամիսներ դիմադրելով պահանջել . . .
անխափ վարչութիւն մը (autonome/
երկարատեւ դիմադրութեան մը հա-
մար հարկաւոր բոլոր պէտքերը
կանխաւ հոգալու է, ինչպէս զէջ
ու ազգամիջոց, անունը և դը-
րամ, կուտող ոյժեր և պատմեղ-
ներ կամ անառիկ դիրքեր: Սը-
նունցի մէկ մասը լինելու է մի
միայն պահեստի, պաշարման
միջոցին միայն գործածելի: Պա-
հեստի անունը ըլլալու է գըր-
խաւորաբար (սոմատօզ) somatose
ըսուած միջոցներ որոնք երկու
տարաբ կանխաւոր սնունդ է, և
մարդ մը կարող է իր վրայ կը-
րել վեցամսեայ պաշար մի օրայ
ժանրութեամբ: Պահեստի պաշարի
հետ սննդաւոր է նաեւ ծայրափ
դէմ (pastilles de soit) ըսուած
շարքերը, որ պաշարման միջո-
ցին եթէ ջրի նեղութիւն ըլլայ,
կուտող ոյժերու այնքան անտա-
նելի եղող ծայրաւ մի քիչ մեղ-
մանայ, այս նպատակին համար
է ծառայելու նաեւ հասարակ նօսաթի
չէքերին: Կարելի եղածին չափ հե-
ռադիտակները շատ ըլլալու են,
փորձառու կուտողներ անոր պէտքը
շատ լաւ զգացած են, եթէ հե-
ռադիտակ չըլլայ, սխալմամբ կարե-
ւի է իր ընկերը վերաւորել և կամ
կասկածի տակ թողլ տալ որ թըշ-
նամին մօտենայ և կամ լաւ դիրք
ունեն, եթէ կարելի է, ևս կը պա-
հանջեմ որ ամեն մարդ իր առա-
ձին հեռադիտակ ունենայ: Ընդ-
հանուր ապստամբական շարժման
մէջ հարկաւոր է ունենալ նաեւ մի
առանձին առողջապահական խումբ,
որոնց մէջ գտնուի բժիշկներ, վի-
րաբոյժներ և օգնողներ, դիակները
և վիրաւորները այս միջոցաւ շատ
անգամ կուտ դաշտը և վշտամբին
ձեռք չեն թողուիր. և կամ ընկերը
չստիպուի իր ընկերը սպաննել, թըշ-
նամին ձեռքը ողջ չլինալու մտած-
մամբ: Այս հէ՛զ ու տարաբաղ զան-
նուէր երկնայադրներէն շատերը
դարմանալիքը ամենափոքր վէրքի
մը համար իրենց ընկերներէն զըն-
դակներուն տակ անհնալցած են:

Ասիկա, ինչ որ ալ ըլլան հա-
մաժանրերը, բարբարոսական ա-
բարք մըն է. . . .
Վերոյիշեալ նկատողութիւնները
թէ ևս մեր նպատակին դուրս էին,
սակայն փոխադրով մինչև ցարդ կա-
տարուած ու և չէ շարժման մէջ
այս ամենապարզ և ամենահրաժեշտ
միջոցներուն բացակայութիւնը, ու-
ղեցի խորհող դուրսներու ուղղու-
թեանց ենթադրել, մեր նպատակը
չէ այստեղ կազմել տպստամբական
շարժման յատուկ ծրագիրը, ի հար-
կին, եթէ Աստուած այդ օրը մեզ

աշխարհի երկիրներէն Ամերիկան է միայն, որ երբ օտար ազգեր հոս ոտք կը կոխեն. կը կորսնցնեն իրենց բոլոր նախապաշարումները, ազատ մարդ դառնալու համար, այս բանով Ամերիկայի Հնչակեանքը և Գաղ-նակեանքը կարող են միանալ։

Թեքու Պ. Երկաթ այնպէս ըմբռնած է և իրօք ալ այնպէս է, սակայն ոչ ընդհանուր առմամբ։ Գրանի մը անձինք որք անարժանաբար յեղափ. կուսակցութեանց ներկայացուցիչ պաշտօնը ստանձնած են, միշտ կը հակառակին միութեան իրականացման։

Հաշիւ եղած է որ Ամերիկայի մէջ 10000 Հայ գաղթական կայ, ասոնց հարիւրին մէկը հազիւ թէ յեղափոխական գաղափարներ ունի, ըսել է 1000 կը հասնի ամերիկեան Հայ գաղթի յեղափոխականաց թիւը, որոնց 3/4 մասը նորակազմ Հնչակեան են։ Մնացեալ 9000 հայերը, այդ ազատ և քաղաքակիրթ աշխարհի մէջ իրենց Հին ու բոլորած նախապաշարումներով ողորդւած, յեղափոխական վանձ գործին հակառակ են և Ազգ. սըրբազան դատին լուսնայ մը իսկ շնորհիւով, գործիչ դասին դէմ ատելութեամբ կը վարուին։

Պ. Երկաթ քաջամանօթ ըլլալով ամերիկեան ազատ գաղափարներուն ու գործերուն, կ'ենթադրէ թէ մերոնք ալ այդ լայն և ազատ հոսանքէն ազդուած են։ Ո՛ր յուսախափութիւն։

Այս ցաւալի կացութիւնն է որ Հետզհետէ Ազգը անգունդին խորը կը մզէ և վիճակին չլարողներ, որը դարմանելու համար անհուն ջանքեր և զոհողութիւններ կ'ընեն լուսամտի աղջակներ։

Սպասենք և յուսանք մեծ արդիւնքներու։

ՆՈՐ-ԱՅՐ

ՆԱՄԱԿ ՍՄԵՐԻԿԱՅԻՆ

ԸՐՈՒՆՍ, 24 Հոկտ.

... Խմբագիր

«Միութիւն»-ի վերջին երկու թիւերը կարգաւորեց և զգաւորեցանք տեսնելով մեր յեղափոխականներու յամառ ընթացքը։ Աւօթ իրենց, որ ազգին ճակատագրին հետ կը խաղան, միշտ անդրադուլի մնալով իրենց սեպին մէջ։

Եթէ ոչ միութիւն. դոնէ Համերայութիւն ալ կարելի չէ գոյացնել ինչո՞ւ չեն պատասխաներ միջ այդ պարտնները, կը զարմանանք մենք և դրեթէ ամբողջ Հայ ժողովուրդը։

Երբ «Իրօք»-ը ձեռք գ'առնեն, կը տեսնեն այսինքն գրուածքներ, որ կարծես թէ իրենց մեծամեծ հրապարակով պատերազմ հըրատարական են թուրք կառավարութեան դէմ, պատերազմ մը՝ յորում օրական հարիւրաւորներ կ'իյնան և հաղաբարներ կը վերադառնան։ Մենք հետաքրքիր ենք գիտնալ թէ արդե՞ր ի՞նչ կը յուսան շահի կամ շահեցնել ազգին ժողովուրդը շրջանով մեծախառնութեամբ։

Սրտասանմանի ազատական Հայ թերթերը երբ կ'իլին մատնանիլ կ'ընեն իրենց սխալ քայլերը, Գաղ-նակեանքները չեն վարանիր և չեն ամաչեր յախուռն յարմարութիւնը ընել և զանազան անպատեհներով մկրտել զանոնք։ «Պղտոր ջուրի մէջ ձուկ որսացողներ», «պահպանողականութիւն քարոզողներ», «բախտախնդիրներ» և այլն տխուրները տալով։

Գաղնակեցիականներ և Հնչակեանները թող լաւ գիտնան որ այսօր Հայը պահպանողական չիլնար ըլլար, «պահպանողականութիւնը դաւաճանութիւն և մատնութիւն է»։

Ո՞վ ըսաւ. Գաղնակեցիականաց որ այդ թերթերը պահպանողականներ են։ Ո՞չ, իրենք կը գրեն ուղածնուն պէս, որպէս զի ժողովրդին համակրութիւնը իրենց գրաւեն։ Ըստ մեզ թէ՛ այդ թերթերը և նոյն իսկ

ժողովուրդը շարունակ յեղափոխութիւն կը գողնն, բայց ոչ տեսական որ մինչև ցարդ ազգին տունը աւրեց, այլ գործնական և իսկական յեղափոխութիւն։

Իսկական յեղափոխութիւնը կամ ընդհ. շարժումը, նիւթական ու բարոյական ոյժի կը կարօտի, այդ ոյժը գոյացնելու համար ՄԻՈՒԹԵԱՆ կամ ՀԱՄԵՐԱՅԻՆՈՒԹԵԱՆ պէտքը անհրաժեշտ է։ Այս պայմանէն զատ փրկութիւն չկայ մեզի համար, լաւ ըմբռնեցէք և փութացուցէք իրականացումը, եթէ իսկապէս Ազգ. Սուրբ Գրքին համար անկեղծ աշխատողներ էք։

ԲՈՒՄԱՆԻ

ՍՄԻՍՏՐԻԻ ՎԱՐՄԱՊԵՏՏՐ

Միութեան նախկին վարժապետը ամբաստանող յորում մը հրատարակած էինք մեր 14րդ թիւին մէջ որովհետև Հնչակեանք և Գաղ-նակեանք՝ այսինքն կուսակցական խնդիր կը պարունակէր իր մէջ։ Նոյն տեղէն ուրիշ նամակ մը կը հերքէր այն յօդուածի բովանդակութիւնը, որ աւալ հրատարակեցինք։ Երկրորդ հերքում մըն ալ ստացանք նոյն երկրի «Հայ Երիտասարդաց Միութիւն» կիթը. կըրոզ։ Մի քանի օր յետոյ ստացանք ուրիշ նամակ մը որ, աւելի աւաբաստանիչ և ուրիշ փաստեր առաջ բերելով խիստ լնդու մը կը գործածէ դատաւարին դէմ։

Այս տարօրինակ պատահարին հանդէպ մենք ալ շուարած մնացինք թէ իրաւունքը որո՞ւնն է։

Տեղի չաւարտ համար անձնական կրքերու կ'իլինք, կը խնդրենք մեր Պ. Պ. նամակագիրներէն որ հաճին վերջ տալ սոյն անտեղի խնդրոյն և դադարի դիրքը հաղածէն ու ամբաստանելէ, որով թէ՛ իրենց լըրջութիւնը յարգած և թէ՛ զմեզ իրենցմով զբաղեցուցած չեն ըլլալ։

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՍԻՏ

Ե Ի

Պ. ԹԵՐՐԵԼ

Միացեալ-Նահանգներու Կ. Պոլսոյ նախկին դեսպան Պ. ԹԵՐՐԵԼ՝ հիւրդի պալատը կանչուելով Սուլթանին հետ մտերմական տեսակցութիւն մը ունեցաւ որ երկու ժամէն աւելի տևեց։

Երկրորդ այն սրահը՝ ուր ընդունուեցաւ Պ. ԹԵՐՐԵԼ, խիստ չքեղ էր. պատերը զարդարուած էին թանկագին և հազուադէպ նկարներով, գետինը ծածկուած էր պարսկական հիւսիսի գորգերով, ուր թէյ կը ներկայացուէր ոսկեղէն գաւաթներով։ Սուլթանը կը հանգստանար թանկագին նիւթերով զարդարուած փառաւոր բազմոցի մը վրայ, իր մօտ ունենալով փորձի սեղան մը, որուն վրայ գրուած էր բաւական թուով սիկարէթ, զոր յաջորդաբար կը գործածէր փ ա տ ի չ ա հը։

Սոյն ընդունուելուին ներկայ էին Սուլթանի արարողապետ Միւնիր փաշա և Պ. ԹԵՐՐԵԼ թարգմանը։

Կարգ մը սովորական յարգանքներէ և համակրական խօսակցութենէ մը յետոյ, Սուլթանը ազաւցեց Պ. ԹԵՐՐԵԼին որ Հայկական հոտորածի առթիւ՝ Ամերիկայի հասարակութեան իր մասին չփորձած և յուզուած գաղափարները հանդարտեցնէ, ցոյց տալ իր անմիջականութիւնը և հայրախում հղածութիւնը դէպի Հայերը։ Պ. ԹԵՐՐԵԼ հաճութեամբ համապատասխանեց անոր բաղձանքներուն, խոստանալով ծանօթացնել ամերիկեաց ժողովրդին Սուլթանին բարեացակամութիւնը և բարի վարմունքը դէպի Հայերը։ Պ. ԹԵՐՐԵԼ

աւելցուց թէ այդ պաշտօնը կատարել աւելի հեշտ պիտի ըլլար իրեն, եթէ պաշտօնական յարաբերութիւն չունենար կայս. կառավարութեան հետ։

Նախկին Պ. Դեսպանը իր ամբողջ կեանքի մէջ եթէ նշանաւոր գործ մը տեսնելով փառաց չէր արժանացած, բարեխէր Սուլթանին այդ խնդիրը կատարելով կրնայ ապահովել իր անհատական այդ փառքը և անոր արժանանալ։

Պ. ԹԵՐՐԵԼ Սուլթանին դատնալով ըսաւ. «Կը շնորհաւորեմ ձեր քաղաքականութիւնը, որուն վրայ պանծալու իրաւունք ունիք, որովհետև տէրութեանց անկասկածներ կ'երայխառորէ, մինչդեռ ձեր վեհափառութեան երկրի անկասկածները ամբողջ Եւրոպա երաշխաւորած ըլլալը ցոյց տալու համար, կրեա՞նք մէջ մինչև իսկ քրիստոնէի յայտնիք ալ սպանեցին»։

Սուլթանը ցած ձայնով մը պատասխանեց. «Այո, անոնք այդ բաղձանքը բնական է, իրենց մէջ պատահելի ընդհարումի մը առաջքն առնելու համար»։

Դեսպանը՝ կարգ մը ջատագովներ կարգաւորէ յետոյ Սուլթանը դարձեալ առաջ բերաւ Հայկական կոստորածի խնդիրը և ըսաւ. «Ինչպէս կարելի է մուսուլման մը առանց պատճառի Հայ ջարդէ, իսլամ կրօնի զանազանութեան համար, քանի որ Դուրանը կ'արգիլէ այդ օրինակ խտութիւնները, և կը պահանջէ որ բոլոր այն մարդիկ որ Աստուծոյ կը հաւատան, պէտք է պաշտպանուին հաւատացեալներու կողմէ, բացի պատերազմի ժամանակէն»։

Իմ կրօնքս կը պատուիրէ ինձ միշտ առաքինութեան հետեւիլ և բարիք ընել։

Այս երկիւղած խօսքերէն յետոյ, Ապտուլ-Համիդը իրեն փաստ ներկայացուց բոլոր Հին սուլթաններու (առանց ըսելու բացի իրմէ) օրինակ մինչև այսօր Հայոց վայելած շնորհները և անոնց տրուած բարձր պաշտօնները և այլն։

Պ. ԹԵՐՐԵԼ մեծ զարմանք կը դիտէր երբ կը տեսէր այն աստուածաժախ պարսկական խօսքերը, որուն շտաբը «փորձառու մարդասպան» տիտղոսը տուած են և պատասխանեց։

«Երբեք գաղափար չունեցայ և չչայտնեցի թէ ձեր վեհափառութիւնը թիւադրեց կամ հրամանեց Հայոց կոտորած, բայց միւսնայն ժամանակ վստահ եմ թէ, եթէ պատահմամբ կրկնուի այդ կոտորածը, հաւատացե՞ք, հետեանք խիստ վնասակար պիտի ըլլայ Օսմ. կայսրութեան»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻԿ կառավարութիւնը անտեղի տարածայնութիւնէ մը զրդեալ որպէս թէ, Մէրսինի և Ատանայի Հայերը այդ տեղերը յեղափոխական նոր շարժում մը առաջ բերելով խռովութիւններ պիտի յարուցանեն։

Գաղական պաշտօնեայ մը կը զրկէ Մէրսին, որ քննութիւն մը բանալով 30 Հայեր բանտարկել կուտայ, որոնց հետ կը բանտարկուի նաև Հիւլենայի մը և աստրիական Լոյտի չողենաւային ընկերութեան գործակաւոր Պ. Մօրաշաֆօլի, իրը Հայ յեղափոխականաց գործակից, կ'արտաքսուի Իրիքէն։ Հոգ չէ որ Հայերը յանդիման բանտարկուելով զանազան տանջանքներու ենթարկուեցան, բայց եւրոպայի անհատի մը արտաքսումը աստրիական կառավարութեան մեծ զայրոյթ պատճառելով, զիւրադիտական խնդրոյ առարկայ դարձաւ և Կ. Պոլսոյ աստրիական դեսպանատան ու Բ. Դրան միջև պաշտօնագրեր փոխանակուեցան։

Աստրիական կառավարութիւնը սոյն միջադէպը նախատինք համարելով, իր դեսպանին միջոցաւ ըստպառնալից զեկուցադր մը տուաւ Դրան, որով կը պահանջէ 8 մամէն գոհացում տալ իրեն և Ատանայի վալին պաշտօնանկ ընել. իսկ հակառակ պարագային դեսպանը իր անցագրերը խնդրելով պիտի թողու օսմանցիներու մայրաքաղաքը և իր մեկնելէն անմիջապէս յետոյ Մէրսին քաղաքը պիտի ռմբակոծէ տեղւոյն աստրիական մարտանաւը։

Վալ տէր չունեցողին . . .

ԱՅԼԱՆԻՍԱՆԻ Էմիրը՝ իր հրապարակ ժողովրդին ուղղեալ շրջաբերական յայտարարութիւնով մը խստիւ կարգիւ Հնչակաւորին յեղափոխութեան մասնակցիլը։ Սոյն հրամանին հակառակ վարուողները 1000 լուսի տուգանք վճարելու պիտի դատապարտուին։

ԹՈՒՐԻԿ կառավարութիւնը թողւտուլիւն ըրած է Հիւլենական չողենաներու ազատ մուտքը թըրքական նաւահանգիստները և հեռադրական հաղորդակցութեան կերականութիւնը։

ՄԱՆՍՈՒՍԻԷ ընկ. չողենաւեներէն մին անցեալ շաբաթ Վօլօսէն բաղմաթիւ վիրաւորեալ թուրք զօրքեր աւելեալ կը մեկնէր Պոլս, սաստիկ աղիւն ութեան մը բռնուելով, ստիպուել է Վօլսու վերադառնալ։ Ծոգնաւի շարժումէն 132 Հիւանդ զօրքեր մահացան են։

ՄԷՐՍԻՆԻ միջադէպին համար Աստրիոյ և թուրքի միջև պատահած քաղաքական բաղադրեմ ծանր կիրպարանք մը պիտի ստանար, եթէ Բ. Դրան չզիջանք իրաւի գոհացում տալ։ Աստրիոյ Բ. Դրան մատուցած վերջնագիրը անմիջապէս առաջ պիտի բերէր քաղաքական յարաբերութեանց խըզումը, և Մէրսինի ռմբակոծումը։

Կ'ընէ թէ՛ քայլի Դրանիաւ միւս պետութիւնները զգալապէս բնախնդիր դարձած Դրան առջև, ամենակողք պատճառներու համար պատերազմի սպառնալիքներ կ'ընեն։

ՆՈՅՆԵՐԵՐ Եւրոպական «Բէյն»-Ապալտ» շաբաթաթիւ Կ. Պոլսէն հոս հասան թուրք Հիւսպատոնները։ Պիւթնի Հիւսպատոն տնտեսական և Միթի պէյ և քարտուղար Նիքոլայի տնտեսական Հայ-թիւայի Հիւսպատոն Հայազգի Չաբէզ պէյ, Բաթրաի Հիւսպատոն Ալի պէյ մի քանի օրէն պիտի գայ իր պաշտօնատեղին։

ԿՈՄՍ ԿՈՂՈՒԹՎՍԻԻ առաջարկեր է պետութեանը՝ Կ. Պոլսոյ դեսպաններուն յանձնել կրտական խնդիր վերջնական լուծումը։ Այս առաջարկը ընդունել են Ռուսիա և Դադարի, միւս պետութեանց որոշումը տակաւին դիտուած չէ։

ՍՈՒԼԹԱՆԸ՝ Թեսալիոյ զօրքերու հիւանդութիւնը և զօրաբանակաց համար ըրած մեծամեծ ծախքերը ի նկատի առնելով խնդրած է մեծ տէրութեանց Կ. Պոլսոյ դեսպաններուն, որպէս զի կարելի եղածին շախ փութացնեն խաղաղութեան վերջնական պայմաններու ստորագրութիւնը։

ԼԱՄԻՍԻ յունական Յրդ հետեակ զօրաբանին պատկանող մի քանի զօրքեր հիւանդանալով տեղին հիւանդանոցը կը գլխին դարձանուելու համար։ Հիւանդանոցի տեսչութիւնը անկողն յ պակասութեան պատճառով չէ ընդունած, իսկ հիւանդ զիւրադներ կարծես

լով թէ իրենք կողմնակալ պաշտպան չունենանուն համար չեն ընդունուիր, բռնի ներս մտնելու փորձ ըրած պահուն ընդհարում մը տեղի կ'ունենայ, յորում 4 զօրքեր սպաննուած և 10 զօրքեր ալ ծանրապէս վիրաւորուած են։

—

ԹՈՒՍԻՈՅ Բ. Դրան մատուցած վերջին կէս-պաշտօնական ղեկուցումը մեծ անհանգստութիւն պատճառած է զիւրադական տակունքներու մէջ։ Ռուսիա տեսնելով թուրքիոյ նաւատարմի զօրացնելու նըպատակը, կ'ուզէ արգիլել պահանջելով պատերազմի տուգանաց վճարումը։ Կ'ընտրէ թէ յառաջիկա գտրուն շատ հաւանական է որ երկու տէրութեանց միջև պատերազմ ծագի։

—Սուլթանը կը բաղձայ Անգլիոյ բարեկամութիւնը վերաշահիլ։ Ահտ քաղաքական փոփոխում մը, յորմէ Հայերս կրնանք օգտուիլ։

—

ԹՈՒՍԻՈՅ ՉՈՐԸ ԵՒ ԿՐԵՏԷ. Հաւատարմ աղբիւրէ կը հաղորդեն թէ Չորը իր անձնական ծախքով վերադիւնել պիտի տայ Կրեալի իսանիա քաղաքին քրիստոնէից աղի թաղը, որ վերջին խռովութեանց ժամանակ թուրքերը հրդ ճարակ ըրած էին։ Բացի աստի պատկառելի գումար մը պիտի նուիրէ ի նպաստ Գանտիայի, Ռէթմոյի և Հէրակլիոնի թշուառացեալ քրիստոնէից։

—

ԿՐԵՏԷԻ ընդհ. կառավարչի ընտրութեան մասին մեծ պետութիւնները դարձեալ նոր կարծեաներ փոխանակեցին խնդրին վճարական լուծումը փութացնելու համար։

—

Կ. ՊՈԼԻՆ Կոստոնի «Թան» լրագրին կը հեռագրեն թէ թուրքիոյ և Պալկարիոյ քաղաքական յարաբերութիւնները շարժական ցըրքաացած ըլլալով՝ Սուլթանի կառավարութիւնը ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք առած է։

—

ՅՈՒՆՈ-ԹՐԻԿԱՆ պատերազմի խաղաղութեան պայմանները կ'ընտրուր պաշտօն ունեցող պատուիրակները շարունակ ժողով կը գումարեն թօփուանէ։ Թուրք կառավարութեան առաջարկած պայմանները միջնադարական են ինթրապետութեան, երկարուելով երկու կողմէ ընդունուած և ստորագրուած են, բայց՝ երկու յորժանանքէ։ Հիւսպատոնական իրաւաստութեանց, ոճրագործներու և քաղաքական յանձաւորներու յանձման խնդիրները մնացած են։ Այս երկու ծանր խնդիրներու համար մինչև այսօր անհամաձայնութիւն կը տիրէ, եւրոպական մամուլը կը կարծէ գիտնալ թէ առանց եւրոպական պետութեանց պիտի լուծուին այդ խնդիրներն ալ։

—

ԼՈՐՏ ՍՈԼՁՊԻՐԻ ի մօտոյ պիտի հրաժարի արտաքին գործերու նախարարութեան պաշտօնէն։

—

ԹՈՒՐԻԿ կառավարութիւնը Յուստանի, Պուլկարիոյ և Սերպիոյ սահմանները ամրացնելու գործը փութով առաջ կը տանի և ռազմապիտակական պարագաստութիւններ կ'ընէ։ Առ այս Ռուս կառավարութիւնը սաստիկ զրգուած Կ. Պոլսոյ իր դեսպանին միջոցաւ Բ. Դրան խիստ ղեկուցագիր մը տալով՝ կը պահանջէ ռուս-թըրքական պատերազմի տուգանքին մնացորդ մէկ միլիոն 300.000 ոսկի վճարումը, ի նկատի ունենալով 800.000 ոսկի գումարը զոր պիտի ստանայ թուրք կառավարութիւնը Յունաստանէն։

ՍՈՒԼԹԱՆԸ բացարձակապէս մերժած է նոր պէրթները տալ Պուլկարիոյ։

ԽՄԲԱՌՈՒԹԻՒՆ՝ ՄԻՈՒԹԻՒՆԻ ԱՌԷՆԸ, ՀԱՅԿ. ԱԶԳԱՏ ՏՊԱՐԱՆ

պարզեւէ ինձ պէս շատ մը խորհրդ-
դատուններ կը գտնուին և լրջօրէն կը
կսովեն պատրաստութեանց ծրա-
վելը:

Արդ, մեր «նպատակի և գործի
ծրագրին» մէջ պէտք է ընդունին
ընդհանուր ապստամբական եղա-
նակը:

3. — Հայութեան փրկութիւնը
կարելի կը լինի պատրաստուած ոյ-
ժերը տիրող պայմաններէ հաւեմատ
չարժելով և ուղղելով: Տիրող պայ-
մանները ինչպէս յայտնի է, շատ
անգամ արտաքին են, և այն ալ
գլխաւորապէս դիւանագիտական:

Եթէ մեր գծած ծրագրին 1 և 2
յօդուածները լի պիտի անխնայ կա-
տարած ըլլանք և այս երբորդ յօ-
դուածը անուշադիր թողունք, հա-
ւանականաբար մեր յոյսերը ի դերե-
կիւն և մեր ձեռնարկութիւնն ու
զոհողութիւնը անյաջողութեան կը
մատուցին:

Ինչպէս արդէն փորձը մեզ ցոյց
ուսաւ Սասնայ, Զէյթունի ապս-
տամբութեան և յունական պատե-
րագրին մէջ, Հարկ անհրաժեշտ է
լաւ կշռել ժամանակին ոգին, քա-
ղաքականութեան և դիւանագիտու-
թեան ընթացքը, եթէ ասոնք նը-
պատառը ըլլան մեր շարժման, այն
ստեղծ միայն շարժիչ, հակառակ պա-
րագրային մեղեդական անշարժութիւն
ցոյց տալ:

Միւսին ցարդ մեր կուսակցու-
թեանց զանազան շարժումները մեր
կանխատեսած այս պայմաններուն
գլխովին հակառակ են եղած: Գո-
խան յեղափոխական շարժումները
եւրոպական դիւանագիտութեան յար-
մարցնելու և իսկապէս անկէ օ-
գուտ քաղելու, կուսակցութիւննե-
րը ի դուր ջանացած են եւրոպա-
կան դիւանագիտութիւնը իրենց
շարժումներուն յարմարեցնելու, տը-
գիտաբար և տղայաբար կը պա-
հանջեն որ եւրոպական դիւանա-
գիտութիւնը ստիպեալ իրենց շար-
ժումներուն հետեւ և ոչ թէ ի-
րենք անոնց հետեւին, ինչպէս որ
կը պահանջէ սղծատութիւնն ու
փորձառութիւնը: . . . Կերեքի թէ
մեր պրն. յեղափոխականները «մի-
կալմանի» ունին և չեն ուղեր
հպատակիլ ընդհանուր օրէնքին:

Ուրեմն, մեր «նպատակի ու
գործի ծրագրին» մէջ պէտք է մըտ-
նենք պայմաններուն հպատակե-
լու. անհրաժեշտ յօդուածը, որը կը
նշանակէ հանգամանքները, որոնցմէ
օգտուել մեր շարժը կը պահանջէ:

Քաղաքականութեան մասին մի
Oriental (տարօրինակ) երևոյթ չէ
միթո՞ Ռուսիոյ պարսկահայերուն
պաշտպանելը, մինչդեռ Թուրքիոյ
մէջ բոլորովին հակառակ ընթացքի
մը կը հետեւին Այս հակառակութեանց
պատճառը ինչ է: Գաղտնիքը Ռու-
սիոյ քաղաքականութեան մէջ է:
Ռուսիա պարսկահայերը իր պաշտ-
պանութեան տակ առնելով մի օր
տախթ պիտի ունենայ այդ պա-
տրուակով Պարսկաստանի երկիրնե-
րը գրաւել, մանաւանդ Ատրպա-
տական նահանգը, որ Պարսկա-
ստանի դրախտն է: Ուրեմն, պարս-
կահայերը եթէ Ռուսիոյ այս քա-
ղաքականութիւնը ի նկատի ունե-
նան և իրենց գործերը ըստ այնմ
ուղղեն, օգտակար կ'ըլլին, հակա-
ռակ պարագայի միտքը կը կրեն:
Ինչպէս որ փորձը ցոյց տուաւ անց-
եալ տարի Դաբէժի մէջ պատու-
հած զէպրի ատեն: Առաջնորդը չը
հետեւեցաւ Ռուսիոյ քաղաքականու-
թեան և մինչև իսկ հակառակե-
ցաւ: Պարսիկները քանի մը հայի
տուններ թալանեցին և ունայր ալ
վրասերեցին, ռուսական հիւպա-
տութը երկրորդ անգամ մը ցուցնե-
լով ուղեց ռուսական զօրքեր մըտ-
ցնել Արաքսի ափէն, որը սահմա-
նապետ է Ատրպատականի նա-
հանգին: Տեղւոյն առաջնորդը հիւ-
պատարին հակառակ Շահին հեռա-
գիր քաղելով քաղաքը ապահով
և հանգաբար ցոյց տուաւ, որով
հիւպատութը չկրցաւ իր դերը լիով
կատարել, միայն պաշտօնապէս հա-
յերը Ռուսիոյ պաշտպանութեան են-
թարկեց և նմանօրինակ զէպրերու
կրկնուելու ատեն ռուսական զօրք
մտցնելը յայտարարեց:

Թուրքի վերջերը Դաշակցա-

կանները արաւախումը մը կազմե-
լով մտան տաճկաց հողը և Աղ-
բակի մօտերը 2-300ի չափ քրթիւր
սպաննեցին, իրենցմէ միայն 20 զոհ
տալով: Այս զէպրին վրայ տաճ-
կաց կառավարութիւնը յեղափոխա-
կաններուն յանձնուելը պահանջեց
խառն Պարսից կառավարութեանէն:
Պարսիկ կառավարութիւնն ալ բար-
բարոսական խտրութիւններ ձեռք
առնելով սկսաւ Սալմաստի բազ-
մաթիւ հայ գիւղերը խուզարկել և
գիւղացիները տանել, բանտարկել,
կողոպտել և կաշառք առնել, և 13ի
չափ խեղճ գաղթականներ ձերբա-
կալելով իր յեղափոխական յանձ-
նեց Տաճիկ կառավարութեան: Աս-
կէ դատ վանայ և Աղբակի անցեալ
տարիներու կատարածի ժամանակ
Սալմաստ գաղթող 2000ի մօտ խեղճ
գաղթականները, կին, երախայ և
այլն, բոլորն ալ հաւաքելով ոչ-
խարի նման քշեց բերաւ Դաբէժ
և անկէ ալ ցրուեց չընկալ գիւ-
ղերը: Առաջնորդին բողոքները ան-
լսելի մնացին, և Ռուսիոյ հիւպա-
տան առաջնորդէն վրէժ լուծելու
համար բոլորովին անտարբեր զըտ-
նուեցաւ: Եւ եթէ այս հակառա-
կութիւնը չըլլար, ոչ Սալմաստի
հայ գիւղացիները կը տանջուէին ու
կը կողոպտուէին և ոչ ալ թըլ-
ւառ գաղթականները կրկին գաղ-
թելով թափառական կ'ըլլային:

Այս զէպրը կատարելապէս կը
ցուցնէ քաղաքականութեան կարե-
ւորութիւնը և անոր հետեւելու պէտ-
քը, պէտք մը որ տեւոյն առաջնորդ-
ը չկրցաւ զգալ ու գնահատել
ինչպէս որ մինչև ցարդ չեն զգա-
ցած մեր յեղափոխական կուսակ-
ցութիւնները: Պէտք մը որ խորա-
մտնել Սուլթանը աւելի լաւ զգաց
և աւելի ճարպիկ գտնուեցաւ քա-
ղաքական հանգամանքներէն օգտուե-
լու և հայերը բնաջնջ ընելու վա-
ղիւր ծրագրերը գործադրելու:

Եթէ քաղաքական հանգամանք-
ներէն օգտուելու ճարպկութիւնը
մենք ունենայինք, Զէյթունի ապս-
տամբութիւնը վառ կը պահէինք և
Հայաստանի ու Ռուսիոյ շարժումնե-
րը կը զարգացնէինք: . . . և այն
ատեն թերեւ Զէյթունի անկախու-
թիւնը կ'ապահովէինք, որովհետեւ
քաղաքական կացութիւնը այն ա-
տեն այս ծրագրին նպատաւոր էր,
անոր վրայ պիտի աւելնար անշուշտ
Ռուսիոյ համակրութիւնը:

Կուսակցութիւնները մեր այս
գծած ծրագրին համակերպելով, ու-
րեմն կը պարտաւորին նաեւ խոր-
հրդակցել զանազան տէրութեանց
պետական հայ պաշտօնեաներու և
գիւանագիտներուն հետ, ևս յարա-
բերութիւն հաստատել զանազան մի-
ջոյններով եւրոպացի դիւանագէտ-
ներու հետ, որպէս զի ժամանա-
կին կուսակցութիւնը գիտնայ նը-
պատառը կամ աննպատակ պա-
մանները, և ըստ այնմ շարժի:

Այս երեք յօդուածները թուե-
լով հաւանութիւն չունինք նպա-
տակի և գործի կատարեալ ծրա-
գիր մը ներկայացուցած ըլլալու,
միայն հիմնական կէտերու վրայ
խօսեցայ, մանրամասնութիւնը կըր-
նան գրուել այն ատեն միայն, ե-
թէ կուսակցութիւնը կամք ունե-
նան և ընդհանուր խառն ժողով
գումարեն: Եւ հարկէ որ զանա-
զան կուսակցութիւններէ մի խառն
ժողով գումարելով նախ «համե-
րալի գործելու» մասին խորհրդա-
ցին և վերջնականապէս որոշեն, և
յետոյ փիճաբանութեան ենթարկեն
մեր թուած յօդուածները, և թեր-
թերու միջոցաւ բոլոր յեղափոխա-
կաններու և ոչ յեղափոխական լուրջ
գլուխներու կարծիքները հաւաքեն
թէ հրապարակաւ և թէ առանձ-
նապէս:

Մենք ի հարկին պատրաստ ենք
աւելի երկար և մանրամասն բա-
ցատրութիւններ տալ: Նոյն իսկ այս
թերթի միջոցաւ, եթէ ձեռք և կամ
ուրիշներու կողմէ գիտողութիւններ
ուղղուին:

«Միութիւն»ի առաջին թիւը
կարգաւոր համակրեցայ գաղափա-
րին և մտադրեցի իմ տեսութիւն-

ներս պարզել կուսակցութեանց մի-
ութեան մասին և առ այս հա-
նելու միջոցները ցոյց տալ: Սա-
կայն հետեւեալ նկատողութիւնները
գիտաբար կ'ստանան մէջ թողին և չհա-
մարձակեցայ գրել նոյն նիւթին
վրայ: Եւ այժմ պարզապէս գըր-
չիս տարբեր ուղղութիւն մը տուին
և այս նկատողութիւններս միայն
յարմար դատեցի գրել:

Եթէ շահանգրութիւն, կու-
սակցական կոյր և մոլեռանդ հե-
տեւորութիւն, թիկնամտութիւն,
ցուցամուրթիւն և մեծամտութիւն
մենէ հեռու ըլլան և անկեղծ-
բէն միայն հայութեան ապագան
խորհրդը կարող ենք մենք զմեզ
վերականգնել, հայութիւնը մօտա-
ւոր կ'որոշանուի վրկիւ:

«Միութիւն» թերթը բացի մի-
ութիւն, միութիւն պոռաւէ մի-
ութեան համար գործնական և ի-
րականալի ո' և է լուրջ միջոց-
ներ ու պայմաններ շտապարկեց
ո'չ թղթակիցներու և ո'չ ալ իր
խմբագրին բերնով, գէթ մինչև
ցարդ իմ տեսած թիւերուն մէջ:

Փոխան այս կամ այն կու-
սակցութեան արարքները քննադա-
տելու, փոխան վայնառններ, ող-
բեր և անտեղի սպառնալիքներ կար-
գալու, աւելի օգտակար չէր ըլ-
լար որ ձեռք և կամ ձեռք թղթա-
կիցներու կողմէ միութեամբ կամ
լաւ ևս համերաշխութեամբ գործե-
լու մասին ճշմարիտ ու անկեղծ
ջանքը ըլլային, իրականալի միջոց-
ներու և դիւրաւոր պայմաններու
վրայ գաղափարներ փոխանակէին,
և այսպէս գործակցական միութե-
ան ճանապարհը հարթէին:

Ուրագրութիւնը իր միութեան
ջերմ փափաքող, այս կամ այն
կուսակցութեան նկատմամբ պարտ
էր չեղք և անկողմնակալ դիրք մը
բռնել: Մինչդեռ ընդհակառակն,
սկսած այս կամ այն կուսակցու-
թեան անխնայ կողմնակցներ տալ,
բնականաբար կուսակցութիւններն
ալ, ինչպէս նաեւ անկողմնակալ ան-
ձեր, արհամարանօք վերաբերեցան
զէպրի այն քաղափարները որ ուղ-
ղակի խմբագրութեան դրօշը կը
կրէին: Կուսակցութեանց չպատկա-
նողներ իսկ պահ մը կատկածեցան
անոնց անկեղծութեանը վրայ:

Թղթակիցները մասամբ ազատ
էին իրենց գաղափարները սան-
ձարձակ յայտնելու, թէ և աւելի լաւ
կ'ըլլար որ խմբագրութիւնը խղճի
մտքը հակէր անոնց վրայ, և իր
նպատակին, ուղղութեան համա-
պատասխանողները միայն հրատա-
րակէր: սակայն խմբագրութիւնը ի-
րբը միութեան անկեղծ և ջերմ
փափաքող առնայն զէպս պարտ
էր չեղք մնալ, անկողմնակալ ո-
գի կրիւ և ըստ այնմ խմբագրէր
իր խմբագրականներ: . . .

ՀԱՄԵՐԱՅԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՁ ԹԵ

Մ Ի Ռ Ի Թ

Միութեան անկարելիութիւնը

աւելորդ է երկարօրէն այս տեղ
բացատրել, և եթէ զանազան կու-
սակցութիւններու մէջ միայն «գոր-
ծելու համերաշխութիւն»ը դրու-
թիւն ունենայ, միութեան կառու-
րութիւնը ինքնին կը վերնայ, հե-
տեւորաւ աւելորդ յոյժութիւն և
միութեան մասին աշխատելը, ա-
ւելի օգտակար է և ի դուր ալ ժա-
մալաճառ չենք ըլլար, միայն հա-
մերաշխութեամբ գործելու մասին
խորհրդակցիք, բանակցիք և գա-
ղափարներ փոխանակեք: Համե-
րաշխութիւնը կուսակցութեանց նիւ-
թին կազմակերպութիւնը բնաւ չի
խանգարեր, ամէն կուսակցութիւն
թող ազատ ըլլայ իր որոշ ծրա-
գրով գործել, միայն պէտք է հա-
մաձայնին և համերաշխ գտնուին
գործի ծրագրին հետեւելու, իւ-
րաբանչիւր կուսակցութիւն իր վար-
չական մարմիններով և մասնաձի-
ղերով շարունակէ ըստ առաջնոյն
անկարթէն զօրացնել կուսակցու-
թիւնը, միայն երբ գործել հարկ
լինի, այն ատեն միայն միւսներուն
հետ խորհրդակցի և համերաշխ
գտնուի:

Համերաշխութիւնը դիւրացնելու
և իսկապէս անկէ անկալուած
արդիւնքը քաղելու համար, հարկ
անհրաժեշտ է որ մի վերին վար-
չական և կեդրոնական ժողով ըլ-
լայ, և այդ ժողովն անդամակցին
ամեն կուսակցութեանէ երկերկու
հոգի, և որոնք ընտրուած ըլլան
իրենց պատկանած կուսակցութեան
ընդհանուր քուէով: Այդ ժողովը
ի հարկին բոլոր մասնաձիղերու և
յարաբերութեան մէջ գտնուած բո-
լոր հայ կամ օտարազգի պաշտօն-
եաներու և դիւանագէտներու հետ
խորհրդակցելով և լրջօրէն ժամա-
նակին, քաղաքականութեան և դի-
ւանագիտութեան ընթացքը նկա-
տողութեան առնելով որոշէ ու վճռէ
«ընդհանուր ապստամբութեան» ժա-
մանակը, և բոլոր կուսակցութիւն-
ները պարտաւոր ըլլան յարգել այդ
վճիռը և հնազանդին անոր:

Վարչական այդ ժողովին պա-
տասխանատուութիւնը անհրաժեշտ
է, հետեւաբար անոր անդամակ-
ցողները խոհեմ, զգուշ, լուրջ, հե-
ռառես, փորձուած, անձնուէր,
պահպանողական և չբանբասուած
անձինք ըլլալու են, և ընտրողնե-
րը, քուէարկողները այս պայման-
ները նկատողութեան առնելով ի-
րենց քուէն տալու են: Կարելի է
նաեւ քուէ տալ այնպիսիներուն ու-
րոնք ազատ երկիրներու մէջ թէ և
չեն ապրիր, սակայն ի հարկին կը
համակերպին ազգին կամբին:

Վարչական ժողովը պաշտօնա-
պէս հաստատուելու է եւրոպական
ազատ քաղաք մը և անդամները
ստանալու են համեստ ուժեղներ:

Ժողովին գործունէութեան և
կազմակերպութեան համար հարկ
եղած կանոնադրեր յետոյ կարելի է
պատրաստել, մենք այստեղ մեր յու-
գած խնդիրներուն միայն կամաքը
ներկայացուցինք, սկզբունքը ըն-
դունելի ըլլալէ յետոյ կարելի է զը-
րեւել նաեւ ուրիշ մանրամասնութեանց
վրայ և կարգել աւելի կատարեալ
ու անթերի ընդհանուր ծրագիր մը
այս ծրագրի նախնական և տար-
մական յօդուածներուն, թող հաճի
միութեան գաղափարը մի կողմ
թողուլ և անկողմնակալ ոգով աշ-
խատի միայն համերաշխութեան
պէտքը քաղուել, զգացնել և իրա-
կանացնել: Ասկի զատ ուրիշ տրա-
մաբանական ուղի չկայ, ողբ, ըս-
պառնայլք և այլն օգուտ չեն տար
և ձայն բարբառող յանապատի կը
մնայ:

Այս տողերս բոլոր կուսակցու-
թեանց խորին ուղարկութեան յանձ-
նելով, կ'ապասեմ իրենց իրաւացի
և անկեղծ դիտողութեանց:

ԹԱՓԱՌԻԿ

ԹԱՓԱՌԻԿ

ԱԶԱՏ ԿԱՐԾԻՔ

ՄԻՈՒԹԻՒՆ ԴՈՅԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐ

ՊՈՍԴԸՆ, հոկտեմբ. 13

Կուսակցութիւնը զարգացման
բնեքելոյթներն են: Ազգ մը առանց
կուսակցութեանց մեռած է: Դիտու-
ցէք քաղաքակրթիւթ և զարգացեալ
պղքերը ու պիտի տեսնէք թէ կու-
սակցութիւններէ բաղկացեալ են և
քանի յառաջդիմին այնքան կ'ս
զուարթին: Հայ ազգն ալ ունենա-
լով կուսակցական բաժանումներ,
կ'ապացուցանէ նախ իր դոյութիւ-
նը և ապա թէ քաղաքակրթութեան
և յառաջդիմութեան ուղիին մէջ ըտ-
նելը, միակ հերթութիւնը որ մենք
ունինք մեր աննեղաշանկ ըլլալն
է և այս իր բնական պատճառ-
ներն ունին: Տարբեր կլիմայի և
տարբեր երկիրներու մէջ ապրող
հայերը տարբեր սովորութեանց ու
ձեւերու վարժուած են, մին՝ տե-
սական իսկ միւրը գործնական կըր-
թութիւն առած է և հետեւաբար

իրենց խորհելու անձատ եզանակն
ու կերպը ունին և ասով իրարմէ
կը տարբերին:

Հալածեալ ու կոտորեալ, հող-
նած ու արիւնլուայ հայ ժողովուր-
դը դիտելով իր կուսակցութեանց
աններդաշնակութիւնը նողկանք ըլ-
գաց անոնց դէմ, որ բնական չա-
փով մը արդարացի էր. սակայն
դարման փնտռելու փոխան՝ մերթ
ընդ մերթ միութիւն, միութիւն
աղաղակցի և ուրիշ ոչինչ:

Հնչեալեալ վերջին պատակու-
մէն վերջ առաջնորդ կամ այդպէս
սեպուող անձերու բերաններէ ևս
դուրս սպրդեցաւ միութիւն բառը,
Դրօշակ ու Հնչակ, հարուստ ու
աղքատ, գիտուն ու անգէտ միութե-
թիւն գոչեցին: Սակայն ցաւալին
այն է որ գործնականին մէջ քալլ
մի իսկ շառնուելով՝ եղած տե-
ղերնիս կը մնանք: Ինչ է մեր
ուզածը, անոր իրագործումը կա-
րելի է և ինչպէս:

Այս վիճակին մէջ միակ յու-
սոյ նշլոյն այն է թէ թէ և ուշ՝
սակայն վերջնապէս ուղիղ կերպով
խնդիրը բնեւ սկսած ենք:

Վերջը ըսի թէ կուսակցական
բաժանումներ յոյժ բնական են, դի
այդ կը պահանջէ յառաջդիմութիւն-
նը. նոյնքան և աւելի բնական են
կուսակցական միացմունքը. դի այդ
է պայման յաջողութեան:

Պննել հարկ է թէ ինչպէս կա-
րելի է միացնել երկու մարմիններ:
Բնութեան մէջ օրէքն անփոփոխ է
այն մարմինները միայն սերտ կեր-
պով իրարու հետ կարելի է միա-
ցնել, որոնք յատկութեամբ և տե-
սակով նման են կամ շատ մը նը-
մանութիւններ ունին իրարու: Հեշտ
է պողպատն ու երկաթը իրար գո-
թել, դի յատկութեամբ նման են
միակ բացառութեամբ թէ պողպա-
տի մասնակայն խտութիւնը առա-
ւել է քան երկաթինը, իսկ իւրը
ու ջուրը հալալատկութեանց պատ-
ճառաւ չեն միանում:

Մեր կազմակերպութիւնը հա
յերէ բաղկացած են և կը գործեն
միեւնոյն նպատակի համար,—ահա
միակ նման կողմերը, տարբեր ձե-
ւերով, եղանակով ու միջոցներով կը
գործեն, տարբեր ծրագիր ունին—
ասոնք ալ անման կողմերն են:
Հեշտ էր այս տարբերութիւնները
մէջտեղէն վերցնել, եթէ ուրիշ մեծ
և կարեւոր տարբերութիւն մը ար-
գելէ չըլլար: Այս ալ երկու կողմէն
միութեան համար բանակցողներու
հակասիւյք ըլլալն է:

Դաշնակցական խնդիրը «Դրօ-
շակ»ի խմբագրութեան յանձնելին
դիւրաւ ի կատար հանելու դիտա-
ւորութեամբ, նոր Հնչակեանց Կեդր-
վարչութիւնը իրենց գրութեան հա-
մեմատ արդէն տէր էր խնդրոյն:

Ասոնք երկու հակապատկեր մար-
միններ են, կը տարբերին ուսման
տեսակի և չափի մէջ, ապրած շըր-
ջանակի մէջ, զգացման և գաղա-
փարի մէջ և որ ճանրագոյն է քան
զամենէն, —նոր վարչութեան ան-
գամներէն ոմանք չեն վայելեր ամ-
բողջ Դաշնակցութեան վստահու-
թիւնը:

Ասոնք միացնելու համար նը-
մանցնել հարկ է:

Բնականօրէն ընթերցողը վերի
ըսածներս ի նկատի առնեալով,
յուսահատօրէն պիտի հարցնէ: «Այդ-
քան հակասիւյք մարմինը միացումը
կարելի է: Դաշնակցութեան պարզ է,
—ուր կամք անդ չի անկարելիու-
թիւնը:

